

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ» ԱՊԱՀՈՎԵՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ



Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 8-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով, երկրի 73 ընտրատարածքներից 50-ում առաջադրված թեկնածուներից ոչ

Յոկտեմբերի 30-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով, երբ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստանի» թեկնածուները 50 մեծամասնական ընտրատարածքներից 48-ում հաղթող ճանաչվեցին, «Վրացական երազանքը» 9-րդ գումարման խորհրդարանում, ընդհանուր առմամբ, ստացավ 115 պատգամավորական մանդատ՝ օրենսդիր մարմնում ապահովելով սահմանադրական մեծամասնություն:

մեկին չէր հաջողվել հաղթահարել 50 տոկոսի արգելագիծը, (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՑ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է՛



Յոկտեմբերի 30-ի խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլի ավարտից հետո, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ, դիտորդական բոլոր առաքելությունների գնահատմամբ, 2016 թվականի խորհրդարանական ընտրությունները արդարացի, ազատ, թափանցիկ եւ ժողովրդավարական էին: Նա բոլորին շնորհավորեց ընտրությունների հաջող անցկացման առիթով:

«Այսօր մեր երկրում հաղթանակեց ժողովրդավարությունը: Մեր երկիրը եւս մեկ քայլ կատարեց լավագույն ապագայի, զարգացման եւ բարգավաճման ուղղությամբ: Խորին շնորհակալություններով եմ պարտավորվում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց նաեւ, որ բազմակուսակցական խորհրդարան չստացվեց, սակայն դա էր հասարակության պատվերը:

- Բազմակուսակցական խորհրդարան չկայացավ, որոշ իմաստով դա հասարակության պատվերն էր, թեւ, միեւնույն ժամանակ, ցանկանում եմ հասարակությանը հիշեցնել, որ քաղաքական գործունեությունը չի ավարտվում ընտրություններով, այլ սկսվում է: Համապատասխանաբար, ես ակտիվորեն հորդորում եմ բոլորին՝ մասնակցել բանավեճերին, ակտիվ քաղաքական երկխոսությանը եւ հսկել իշխանությանը,- ասաց նախագահը:

համար եւ շնորհավորեց խորհրդարան անցած բոլոր քաղաքական ուժերին:

«Այսօր մեր երկրում հաղթանակեց ժողովրդավարությունը: Մեր երկիրը եւս մեկ քայլ կատարեց լավագույն ապագայի, զարգացման եւ բարգավաճման ուղղությամբ: Խորին շնորհակալություններով եմ պարտավորվում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց նաեւ, որ բազմակուսակցական խորհրդարան չստացվեց, սակայն դա էր հասարակության պատվերը:

- Բազմակուսակցական խորհրդարան չկայացավ, որոշ իմաստով դա հասարակության պատվերն էր, թեւ, միեւնույն ժամանակ, ցանկանում եմ հասարակությանը հիշեցնել, որ քաղաքական գործունեությունը չի ավարտվում ընտրություններով, այլ սկսվում է: Համապատասխանաբար, ես ակտիվորեն հորդորում եմ բոլորին՝ մասնակցել բանավեճերին, ակտիվ քաղաքական երկխոսությանը եւ հսկել իշխանությանը,- ասաց նախագահը:

«Այսօր մեր երկրում հաղթանակեց ժողովրդավարությունը: Մեր երկիրը եւս մեկ քայլ կատարեց լավագույն ապագայի, զարգացման եւ բարգավաճման ուղղությամբ: Խորին շնորհակալություններով եմ պարտավորվում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց նաեւ, որ բազմակուսակցական խորհրդարան չստացվեց, սակայն դա էր հասարակության պատվերը:

ԳԻՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԲԱՀՄԱԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԳՎԱՅԱՅԱԿ, ՍԱԿԱՅՆ ԴԱ ԷՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՏՎԵՐԸ»




Խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլի ավարտից հետո հրավիրված ճեպասուլիսում, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին բնակիչներին շնորհավորեց խորհրդարանական ընտրությունների հաջող անցկացման կապակցությամբ՝ նշելով, որ հետագայում քաղաքացիները պետք է վերահսկեն իշխանությանը: Պետության ղեկավարը դիտորդներին եւ ՋԼՍ-ների ներկայացուցիչներին շնորհակալություն հայտնեց իրականացրած գործունեության

համար եւ շնորհավորեց խորհրդարան անցած բոլոր քաղաքական ուժերին:

«Այսօր մեր երկրում հաղթանակեց ժողովրդավարությունը: Մեր երկիրը եւս մեկ քայլ կատարեց լավագույն ապագայի, զարգացման եւ բարգավաճման ուղղությամբ: Խորին շնորհակալություններով եմ պարտավորվում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց նաեւ, որ բազմակուսակցական խորհրդարան չստացվեց, սակայն դա էր հասարակության պատվերը:

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ»

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ Ե ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԵՎՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ Ե ՆԱԵՎ ՆՈՐԸՆՏԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻ, ՓՈՒՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ, ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԴԵԿԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՐՑԸ



2016 թվականի խորհրդարանական ընտրություններին համոզիչ հաղթանակ տարած «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը ձեռնամուխ է եղել նոր կառավարության, ինչպես նաեւ երկրի օրենսդիր մարմնի նոր ղեկավարության ձեւավորման համար խորհրդատվությունների անցկացմանը:

տոնում կառաջադրի գործող վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու թեկնածությունը, ակնհայտ է: Ինչպես նշեցինք, կառավարող կուսակցությունում, նոր կառավարության ձեւավորման առնչությամբ, խորհրդատվություններն արդեն սկսվել են: Ոչ պաշտոնական տվյալներով, ֆինանսների նախարար Նոդար Խադուրու փո-

Այն, որ խորհրդարանական ընտրություններում հաղթանակած «Վրացական երազանքը» կառավարության ղեկավարի պաշ-

տոնում կառաջադրի գործող վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու թեկնածությունը, ակնհայտ է: Ինչպես նշեցինք, կառավարող կուսակցությունում, նոր կառավարության ձեւավորման առնչությամբ, խորհրդատվություններն արդեն սկսվել են: Ոչ պաշտոնական տվյալներով, ֆինանսների նախարար Նոդար Խադուրու փո-

«Այսօր մեր երկրում հաղթանակեց ժողովրդավարությունը: Մեր երկիրը եւս մեկ քայլ կատարեց լավագույն ապագայի, զարգացման եւ բարգավաճման ուղղությամբ: Խորին շնորհակալություններով եմ պարտավորվում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց նաեւ, որ բազմակուսակցական խորհրդարան չստացվեց, սակայն դա էր հասարակության պատվերը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԶԵՎ ԿԿԱՌՈՒՅՎԻ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐԶ» ԲԱՅՎԵՅ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՆՈՐ ԱՆՅԱԿԵՏԸ



Նոյեմբերի 4-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը դիտեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ «Բարեկամության կամուրջի» շինարարության համար հատկացված տարածքը, ծանոթացան կամրջի կառուցման նախապատրաստական աշխատանքներին, որոնց վերաբերյալ զեկուցեցին Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը եւ Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Գեոնուրի Արվելաձեն: Դերեղ գետի վրա կառուցվելիք կամուրջը գտնվում է Վրաստան-Հայաստան սահմանագծի Սադախլո-Բագրատաշեն սահմանային վերահսկման անցակետի տարածքում:

Կամրջի շինարարությունը սկսվելու է 2017 թվականին: Այն իրականացվելու է Վրաստանի եւ Հայաստանի կառավարությունների աջակցությամբ, եվրոպայի վերակառուցման եւ զարգացման բանկի (EBRD) ֆինանսավորմամբ, արագընթաց, երթուղային չորս գոտիների պարամետրերով եւ ավարտվելու է երկու տարվա ընթացքում: Դերեղ գետի վրա նոր կամրջի կառուցման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի հյուսիսային մարզում, արագընթաց, (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ. «Ի ԴԵՄՍ ԴԱՎԻԹ ՆԱՐՄԱՆԻԱՅԻ, ՈՒՆԵՄ ՈՉ ՄԻԱՅՆ ԼԱՎ ԳՈՐԾԵՆԿԵՐ, ԱՅԼԵՎ ԼԱՎ ԲԱՐԵԿԱՄ»

Նոյեմբերի 1-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն հանդիպում ունեցավ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հետ:



- Երեւանի եւ Թբիլիսիի միջեւ ձեւավորված է փոխշահավետ համագործակցություն, եւ պետք է նշեն, պարոն դեսպան, որ, ի դեմս Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիայի, ունեն ոչ միայն լավ գործընկեր, այլեւ լավ բարեկամ: Հաշվի առնելով մեր երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը՝ մենք պետք է է՛լ ավելի սերտացնենք ու խորացնենք երկու մայրաքաղաքների միջեւ առկա հարաբերություններն ու գործնական ընթացք տանք շատ ծրագրերի: Այս հարցում, անշուշտ, մեծ է ինչպես Ձեր, այնպես էլ՝ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի դերը,- ընդգծեց Տարոն Մարգարյանը:

Իր հերթին, Գիորգի Սագանելիձեն ընդգծեց, որ իր լիազորությունների շրջանակում կանի հնարավոր, որպեսզի Երեւանի եւ Թբիլիսիի միջեւ ընդլայնվեն համագործակցության շրջանակներն ու ծրագրերը:

- Պարոն քաղաքապետ, իսկապես ողջունելի է այն փաստը, որ Երեւանի եւ Թբիլիսիի քաղաքապետերը ոչ միայն լավ գործընկերներ են, այլ նաեւ լավ բարեկամներ: Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում գործակցության եզրերն իսկապես բազմազան են, եւ վստահեցնում են Ձեզ, որ իմ լիազորությունների շրջանակում կանեմ հնարավորը՝ ընդլայնելու համագործակցության ծրագրերի շրջանակները,- նշեց Գիորգի Սագանելիձեն:

«Այսօր մեր երկրում հաղթանակեց ժողովրդավարությունը: Մեր երկիրը եւս մեկ քայլ կատարեց լավագույն ապագայի, զարգացման եւ բարգավաճման ուղղությամբ: Խորին շնորհակալություններով եմ պարտավորվում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց նաեւ, որ բազմակուսակցական խորհրդարան չստացվեց, սակայն դա էր հասարակության պատվերը:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ»

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խարեն, գերատեսչությունը կզվ-խավորի էկոնոմիկայի ներկա-յիս նախարար Դիմիտրի Քուն-սիշվիլին, իսկ Քունսիշվիլուն՝ էկոնոմիկայի խորհրդի քար-տուղար եւ բիզնես-օմբուդսմեն Գիորգի Գախարիան:

Խոսում են նաեւ Վրաստա-նի ներքին գործերի նախարարի պաշտոնում Գիորգի Մղեբ-րիշվիլու փոխարեն պաշտպա-նության ներկայիս նախարար Լեւան Իգորիայի նշանակման հարցը:

Ենթադրելի է նախարար-ի եւ փոխվարչապետի պաշ-տոնը կվերապահվի Կախի Կա-լաձեին, ընդ որում՝ ՋԼՄ-ներում խոսվում է նաեւ այն մասին, որ նրա թեկնածությունը կուսակ-ցությունը կառաջադրի երկրի նախագահի պաշտոնի համար:

Ամենայն հավանականու-թյամբ, նոր կառավարություն-ում իրենց դիրքերը կպահպա-նեն արդարադատության նա-խարար Թեա Ծուլուկիանին, խթության եւ գիտության նա-

խարար Ալեքսանդր Ջեջելա-վան, աշխատանքի, առողջա-պահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեենկոն:

Վերջերս, ԱՄՆ-ում Վրաս-տանի դեսպան նշանակված Դավիթ Բաքրաձեի փոխարեն, Եվրոպական եւ Եվրանուստ-յան կառույցներին ինտեգրման հարցով պետնախարարի պաշ-տոնում նրան կփոխարինի «Ազատ ժողովրդավարներից» հեռացած Վիկտոր Դոլիձեն:

Ավելացնենք, որ օրակար-գում դրված է նաեւ նախարար-ությունների օպտիմիզացման հարցը, մասնավորապես, քն-նարկվում է Վրաստանի սփ-յուռքի նախարարությունը՝ որ-պես առանձին դեպարտամենտ արտաքին գործերի նախարար-ությանը ենթադասելու հար-ցը:

Բոլոր դեպքերում, «Վրա-ցական երազանքի» լիդերնե-րի հայտարարությամբ, առա-ջիկ օրերին հասարակայնու-թյունը կտեղեկացվի ինչպես կառավարության նոր կազմի,


այնպես էլ՝ նորընտիր խորի-դարանի ղեկավարության վե-րաբերյալ:

Նոյեմբերի 4-ին Վրաստա-նի նորընտիր խորհրդարանի «Վրացական երազանք-ժողովր-դավարական Վրաստանի» հա-մամասնական եւ մեծամասնա-կան ընտրակարգով ընտրված պատգամավորները քննարկե-ցին խորհրդարանի նախագա-հի, փոխնախագահների, խորի-դարանական կոմիտեների ղե-կավարների եւ, ընդհանրապես, նորընտիր խորհրդարանի գոր-ծունեության հետ առնչվող հար-ցեր:

Ինչպես նշվեց հանդիպմա-նը, կառավարող կուսակցու-թյունը խորհրդարանի նախա-գահի պաշտոնի համար քն-նարկում է «Վրացական երա-զանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության ներկայիս գործադիր քարտու-ղար Իրակլի Կոբախիձեի թեկ-նածությունը: Խորհրդարանի առաջին փոխնախագահի պաշ-տոնում քննարկվում է Թամար Չուգոշվիլու, իսկ փոխնախա-

գահի պաշտոնում՝ ներկայիս խորհրդարանական մեծամաս-նության ղեկավար Գիորգի Վու-կու թեկնածությունը: Առաջար-կություններ են արվել նաեւ կո-միտեների ղեկավարների թեկ-նածությունների վերաբերյալ: Մասնավորապես նշվում է, որ նորընտիր խորհրդարանում խորհրդարանական մեծամաս-նությունը կզվխավորի Արչիլ Թալալավաձեն, արտաքին հար-աբերությունների կոմիտեն՝ Սոփո Կացարավան: Ամենայն հավանականությամբ, Իրակլի Սեսիաշվիլին կշարունակի գլ-խավորել անվտանգության եւ պաշտպանության հարցերով խորհրդարանական կոմիտեն:

Նշենք, որ, Վրաստանի սահ-մանադրության համաձայն, վարչապետն ընտրություննե-րից անմիջապես հետո պաշ-տոնաթող է լինում: Խորհրդա-րանում ձայների մեծամասնու-թյունը նվաճած կուսակցությու-նը ներկայացնում է վարչապե-տի պաշտոնի իր թեկնածուին, որը ձեւավորում է նոր կառա-վարությունը:



ԱՄՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՆԻ ԵՐԱԶՎՈՐՅԱԿՆԵՐ ԵՎ ԵՐԿՐԱԿՆԵՐԸ

ԱՄՆ-ի նախագահի դեմոկրատ թեկնածու Դիլարի Բլինքենը ընդամենը երեք տոկոսով է գերազանցում հանրապետական Դոնալդ Թրամփին: Այդ են վկայում New York Times եւ CBS հեռուստաալիքի կողմից անցկաց-ված հարցման արդյունքները: Մեկ այլ հարց-ման համաձայն, Բլինքենը Թրամփին գերա-զանցում է երկու տոկոսային կետով:

Ստատվորապես, յուրաքանչյուր հիմնգե-րորդ հարցվածը հայտնել է, որ քվեարկել է վաղաժամկետ վաղաժամկետ քվեարկած-ների թիվը 22 միլիոն է:

Նշենք, որ ԱՄՆ-ի նախագահի ընտրու-թյունները տեղի կունենան նոյեմբերի 8-ին: Միաժամանակ, կանցկացվեն ԱՄՆ Ներկա-յացուցիչների պալատի, Սենատի մեկ երրոր-դի, ինչպես նաեւ մի շարք նահանգապետե-րի եւ նահանգների օրենսդիր մարմինների մեծամասնության ընտրությունները:

ԹՈՒՐԲԻԱ ԶԵՐԲԱԿԱՎԵԼ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԱՏԱՍՍՎՈՐՆԵՐ

Չերբակավել են Թուրքիայի քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցու-թյան համանախագահներ Սելահաթթին Դե-միրթաշը եւ Ֆիզեն Յուքսեթթաղը, ինչպես նաեւ կուսակցության անդամ եւս 9 պատգա-մավոր: Չերբակավությունները տեղի են ու-նեցել ահաբեկչության դեմ պայքարի գոր-ծով հետաքննության շրջանակում: Չերբա-կավածների դեմ հետաքննություն է իրակա-նացվում «զինված ահաբեկչական խմբա-վորման անդամ լինելու, հանցագործություն կատարելու դրդելու եւ ահաբեկչական խմ-բավորման քարոզչությունն իրականացնե-լու» մեղադրանքներով: Նշենք, որ, բացի վե-րոնշյալներից, Թուրքիայում ձերբակավվել է եւս ինը պատգամավոր:

ԻՐԱՔ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ՄՏԵԼ ԵՆ ՄՈՍԿՎԱ

Իրաքյան բանակի ստորաբաժանումնե-րը մտել են Մոսկվա: Այդ մասին իրադարձու-թյունների վայրից հայտնել է BBC բրիտա-նական հեռուստառադիոկորպորացիայի թղ-թակիցը: Նրա տվյալներով, «Իսլամական պե-տության» զինյալները կատաղի դիմադրու-թյուն են ցույց տալիս:

Իրաքի կառավարությունը հոկտեմբերի 11-ին հայտարարել է երկրի մեծությամբ երկ-րորդ քաղաքի՝ Մոսուլի վրա հարձակում սկ-սելու մասին, որը 2014 թվականից գտնվում է ԻՊ-ի զինյալների հսկողության ներքո: Գոր-ծողությունն իրականացնում են իրաքյան բա-նակը, քրդական աշխարհագորի ջոկատնե-րը, նրանց աջակցում է ԻՊ-ի դեմ ԱՄՆ-ի գլ-խավորած միջազգային կալիցիան:

ՎԱՆՃԱՆԿԵԼ Է «ԱՐԵՎԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒ» ՕԼԵԳ ԴՊՊՈՎԸ

Նոյեմբերի 2-ի երե-կոյան, Դոնի Ռոստո-վում, 86 տարեկան հասակում, սրտի կան-գից վախճանվել է արեւային ծաղրա-ծուկ կերպարով հա-մաշխարհային հռ-չակ ձեռք բերած լե-զենդար կրկեսային արտիստ Օլեգ Դոպովը: Նա Դոնի Ռոստով հյուրախաղերի էր ժամանել Գերմանիայից:

Ավելացնենք, որ 1991 թվականին Դո-պովը մեկնել էր Գերմանիայում ապրելու, իսկ 2015 թվականին սկսել էր հյուրախա-ղերի ժամանել Ռուսաստան:



ՎՐԱՍԱՆ - ՂՅՅԱՍԱՆ

ՎՐԱՍԱՆԻ ԵՎ ՂՅՅԱՍԱՆԻ ՄԻՋԵՎ ԿԿՈՒՈՒՅՎԻ «ԲԱՐԵՎԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՁ» ԲԱՅՎԵՑ ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ՍԱՅՄԱՆԱՅԻՆ ՆՈՐ ԱՆՅԱԿԵՏԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սիսային միջանցքի արդիականացման ծրագրի շրջանակում՝ Հայաստանի ու Վերակառուցման եւ զարգացման Եվրո-պական բանկի միջեւ ստորագրված 10.3 մլրդ եվրո ընդհանուր արժողու-թյամբ վարկային համաձայնագ-րի միջոցներով, Հայաստանի եւ Վրաստանի կառավարություննե-րի համաֆինանսավորմամբ: Կամ-րջի կառուցման աշխատանքները, որ կսկսվի 2017 թվականին, հա-մակարգում է հայ-վրացական միջ-կառավարական համատեղ հանձ-նաժողովը:

Ասենք նաեւ, որ Ռուսթավից Սադախլո արագընթաց ավտո-մայրուղու տեխնիկատնտեսական հիմնավորման եւ մանրամասն նախագծման մրցութային ընթացակար-գերը Վրաստանի կողմից արդեն մեկնարկել են:

«Վրաստանի» ընթերցողին հիշեցնենք նաեւ, որ «Բարեկամության կամուրջի» շինարարության մասին պայմանագիրը Գիորգի Կվիրիկիաշվիլին, Հայաստանի տրանսպորտի եւ հաղորդակցության նախարար Գագիկ Բեգլարյանի հետ, ստորագրել էր Երեւանում, 2014 թվականի

դեկտեմբերի 24-ին, փոխվարչապետի եւ էկոնոմիկայի կայուն զարգացման նախարարի կարգավիճակում:

Նշենք նաեւ, որ Վրաստան-Հայաստան պետական սահմանի «Սադախլո-Բագ-րատաշեն» անցման կետի տարածքում,



Դեբեդ գետի վրա գործող կամուրջը կա-ռուցվել է 1960-ական թվականներին, սա-կայն այն մաշված է արդեն եւ չի կարող լիարժեք ծառայել իր նպատակներին:

Նոյեմբերի 4-ին Վրաստան-Հայաստան սահմանային Բագրատաշենում տեղի ունեցավ նաեւ նոր անցակետի բացման հանդիսավոր արարողությունը: Արարողու-թյանը մասնակցեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկիաշվիլին,

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Հարավային Կովկասում Եվրոպական ներդրումային բանկի տարածաշրջանա-յին ներկայացուցչության ղեկավար Սե-բաստիեն Յուսոն դե Սամպիճին, միջազ-գային կազմակերպությունների ներկա-յացուցիչներ եւ այլք:

Նոր սարքավորումներով եւ են-թակառուցվածքներով հագեցած Բագրատաշենի անցակետն ար-դեն պատրաստ է ընդունել Հայաս-տանից Վրաստան մեկնող Հայաս-տանի քաղաքացիներին առաջար-կելով նրանց ավելի պարզ ընթա-ցակարգեր համեմատաբար ավե-լի կարճ ժամանակահատվածում: Սահմանային նոր բացված անցա-կետը՝ Ռուսթավի-Սադախլո արագ-ընթաց ավտոմայրուղու հետ միասին, կապահովեն Հայաստանից եւ դեպի Հայաստան երթեւեկող ավտոտրանս-պորտային միջոցների անարգել կապը Արեւելք-Արեւմուտք ու Հյուսիս-Հարավ տարանցիկ միջանցքներին եւ կնպաստեն տրանսպորտի տարածաշրջանային ցանցի կայուն եւ մրցակցային զարգացմանը:

Բագրատաշենի անցակետի բացմա-նը զուգահեռ, շահագործման կհանձնվի Գոգավանի, իսկ մինչեւ տարեվերջ՝ նա-եւ Բավրայի անցման կետերը:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ՝ ՎՐԱՍԱՆ-ՂՅՅԱՍԱՆ ՍԱՅՄԱՆԻ ՎՐԱ

Չոկտեմբերի 29-ին Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին եւ Վրաստանում ԱՄՆ դեսպան Յան Քելլին, Վրաստան-Հա-յաստան սահմանային գոտու Սադախլո ավանում, բացեցին էլեկտրոնային մոնիտորինգի համակարգի կառավարման կենտրոն:

Բացման արարողությանը ներկա էին նաեւ ԱՄՆ ռազմական սպառնալիքների նվազեցման գործակալության համատեղ սպառնալիքների նվազեցման դեպար-տմենտի տնօրեն Էլիզաբեթ Ջորջը, Վրաս-տանի ՆԳ փոխնախարար, սահմանային ոստիկանության պետ Ջուրաբ Գամեզար-դաշվիլին, ԱՄՆ դեսպանության ներկա-յացուցիչներ:

Ինչպես նշեց Վրաստանի ՆԳ նախա-րարը, նոր կենտրոնը բացառիկ նախա-գիծ է, որի տեխնոլոգիական աջակցու-

թյունը ապահովում է Անվտան-գության ծառայությունը:

- Սա առաջին դեպքն է, երբ դի-տորդական մման համակարգ տեղադրվում է Վրաստանի պետա-կան սահմանին: Դրա նպատակն է ուժեղացնել անվտանգությունը եւ բա-րելավել սահմանի վերահսկողությունը, ինչը, իր հերթին, կնպաստի սահմանային իրավախախտումների, ապրիմի արտա-գաղթի բացահայտմանն ու կանխմանը, հայտարարեց Գիորգի Մղեբրիշվիլին:



Նոր կենտրոնի բացումը, Կանաչ սահ-մանի հնարավորությունների բարելավ-ման նախագծի շրջանակներում, ֆի-նանսավորել է ԱՄՆ ռազմական սպառ-նալիքների նվազեցման գործակալու-թյունը:

Ծաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱՃԱՄԿԵՏ ԶԵՆ ԿՐՃԱՏՎԻ

«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստանի» գործադիր քարտուղար Իրակլի Կոբախիձեն, մեկնաբանելով երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու լիազորությունների վաղաժամկետ կրճատման մասին կառավարող կուսակցության մտադրության վերաբերյալ տարածված խոսակցությունները, հայտարարեց, որ մինչև լիազորությունների ժամկետի սպառումը ոչ ոք չի անդրադառնա նախագահի իրավասությունների կրճատման հարցին:

Նրա խոսքով, սույն թեմայով հայտարարությունները «քաղաքական սպեկուլացիա» են:

Մեզ մոտ երկրի սահմանադրության փոփոխությունների մասին նախօրոք պատրաստած ոչ մի որոշում չկա: Բոլոր որոշումները ընդունվելու են լայն քննարկման, խորհրդատվությունների եւ փոխադարձ զիջումների հիման վրա: Այդ ամենը սպեկուլացիա է: Ինչ վերաբերում է նախագահի լիա-

զորություններին եւ նրա լիազորությունների ժամկետին, ապա դրան ոչ ոք չի անդրադառնա մինչև սահմանադրությամբ նախատեսված ժամկետի ավարտը: Դա կլինի սահմանադրական սկզբունքների կրպիտ խախտում,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:


Նշենք, որ երկրի նախագահի լիազորությունների սահմանափակման մասին հայտարարություններով հանդես եկան «Միասնական ազգային շարժ-

ման» ներկայացուցիչները:

Մասնավորապես, կուսակցության լիդերներից մեկի՝ Սերգո Ռատիանու հայտարարությամբ, նորընտիր խորհրդարանը անմիջականորեն ձեռնամուխ կլինի Սահմանադրական փոփոխությունների իրականացմանը, որոնց նպատակն է 2018 թվականին չանցկացնել նախագահական ընտրություններ:

Նման կարծիք հայտնեց նաեւ «Համրապետական» Դավիթ Չուրաբիշվիլին: Նրա խոսքով, կառավարող կուսակցությունում համոզված են, որ նախագահական ընտրություններ չպետք է անցկացվեն:

Համոզված են, որ նախագահի լիազորություններն է՛լ ավելի կսահմանափակվեն,- հայտարարեց նա:



150 ՄԻԼԻՈՆ ԳՈԼԴՐ՝ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԱՐԴՅՈՒՆԱԶՆՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Beijing FangyuanChint Energy Technical CO.,LTD եւ Vm Energy LTD չինական ընկերությունները պատրաստակամություն են հայտնել առաջիկա չորս տարում 150 մլն դոլար ներդնել Վրաստանի տարածքում նավթ ու գազ որոնելու եւ արդյունահանելու համար: Համապատասխան հուշագիրը թրքիսիում ներկայացրել են չինական ընկերությունների եւ Վրաստանի Գործընկերային հիմնադրամը:

Փաստաթղթի համաձայն, չինական կողմը նավթի ու գազի արդյունահանման հետազոտական աշխատանքներ անցկացնելու, բիզնես-սկան կազմելու պարտավորություն է ստանձնում, որից հետո վերջնական տեսքով կներկայացնի նախագագիծ:

«ԲԱՔՐՈՒ-ԹԲԻԼԻՍԻ-ԿԱՐՍ» ԵՐԿԱՔԳԺԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԶԵՏԱԶԳՎՈՒՄ Է

«Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգծի շինարարական աշխատանքները հետաձգվում են: Այս մասին հայտնում է ադրբեջանական azadliq.info լրատվական կայքը:

«Բաքու-Թբիլիսի-Կարս» երկաթգծի շինարարությունը կախված է միայն Ադրբեջանից եւ Վրաստանից, այն կախված է նաեւ Թուրքիայից, եւ երկաթգծի շինարարության երկարաձգվելը պայմանավորված է թուրքական կողմով,- ասել է հոկտեմբերի 27-28-ին պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Ադրբեջանի էկոնոմիկայի նախարար Շահին Մուստաֆաեւը:

Նշենք, որ երկաթգծի թուրքական հատվածի շինարարությունը ավարտվելու էր հաջորդ տարի:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԶԱՐՏԵՐ՝ ԹԲԻԼԻՍԻ ԳՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻՆ

Թբիլիսիի դպրոցականները սեպտեմբերից սկսել են ստանալ հասարակական տրանսպորտում անվճար երթևեկության նոր քարտեր: Ինչպես տեղեկացրել է Թբիլիսիի քաղաքապետարանի մամուլ ծառայությունը, հին քարտերի ժամկետը սպառվում է նոյեմբերի 20-ին:

Քարտը դպրոցականներին ընձեռում է քաղաքային ավտոբուսներով, մետրոյով եւ ճոպանուղիով անվճար ուղեւորվելու հնարավորություն: Քարտը նաեւ հնարավորություն է տալիս օգտվել արտոնյալ զներից առևտրական կենտրոններում, այդ թվում նաեւ գրախանութներում:

Քարտերի ստացման համար, աշակերտների ծնողները դիմելու են Թբիլիսիի «Վրաստանի բանկի» սերվիս-կենտրոնին:

Ներկա դրությամբ, անվճար երթևեկության քարտ է տրվել 53 հազար աշակերտի:

ՀՐԳԵՆ՝ ՍԽԱՆՔԱԼԱՔԻ ԵՐԳԱՆԻ ԳՈՒՆԳՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ԳՊՐՈՑՈՒՄ

Այրվել է Ախալքալաքի մունիցիպալիտետի Չունջխա գյուղի հանրային դպրոցի շենքը, որտեղ սովորում էին տարրական դասարանների աշակերտները:

Նախնական տվյալներով, վառարանից կրակը անցել է շենքի ծածկին, ապա բռնկվել է ողջ շենքը: Հրդեհի ժամանակ դպրոցում ոչ ոք չի եղել:

Այս դպրոցում երեք դասարան էր: Այստեղ էին գտնվում նաեւ օժանդակ շինությունը, գրադարանը, լաբորատորիան եւ մարզադահլիճը: Երկու տարի առաջ նախարարությունը մեզ նվիրեց գույքը՝ նոր նստարաններ, աթոռներ, որը սակայն դեռ չէր օգտագործվել: Այդպես էլ այդ ամենը չօգտագործվեց, ոչնչացավ,- ասաց դպրոցի փոխտնօրեն Գոչա Գելաձեն:

ԹԵՎ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆ Է, ԵՎ ԱՅՆ ԴԵՏՔ Է ՀԱՐԳԵՆ»



Ի նչ - պես հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, նորընտիր խորհրդարանում «Վրացական երազանքի» սահմանադրական մեծամասնությունը ժողովրդի որոշումն է, եւ այն պետք է հարգեն ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս:

Նրա խոսքով, վրացական պետությունում ժողովրդավարության զարգացումը այնպիսի մակարդակի է հասել, երբ մարդիկ իրենք են որոշում, թե ովքեր են լինելու իշխանությունում:

Այսօր մենք ապրում ենք Միխեիլ Սակաշվիլու օրոք մշակված սահմանադրության ժամանակահատվածում, իսկ

նրանում ասված է, որ երկրում խորհրդարանական կառավարում է: Խորհրդարանը գործադիր իշխանության աղբյուրն է եւ, ելնելով դրանից, բացառված չէ, որ օրենսդիր մարմնի դերն է՛լ ավելի ուժեղանա,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

ԴԱՏԱԿԱՆ

ԱՌԱԶԻՆ ԱՆԳԱՄ ՆՇԱՆԱԿՎԵՑԻՆ ԱՆԺԱՄԿԵՏ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Առաջին անգամ Վրաստանի դատարանների պատմության մեջ նշանակվեցին 12 անժամկետ դատավորներ: Արդարադատության Գերագույն խորհրդի որոշմամբ, այն դատավորները, ում փորձառնական եռամյա ժամկետը սպառվում է նոյեմբերի 29-ին, անժամկետ դատավորներ նշանակվեցին Թբիլիսիի եւ տարածաշրջանների դատարաններում:

Անժամկետ դատավորների թեկնածությունների մեծամասնության հարցում խորհրդի անդամների որոշումը միահամուռ էր, թեպետ, մի քանի թեկնածուների Գերագույն խորհրդի մի քանի անդամներ չպաշտպանեցին:

Անժամկետ դատավորներ են նշանակվել աղմկահարույց մի քանի գործերի դատավորներ: Մասնավորապես, երկրորդ ատյանում «Ռուսթավի 2»-ի գործով դատավոր Նատալիա Նազգախձեի թեկնածությունը Վճռաբեկ դատարանում,

անժամկետ դատավոր նշանակելու հարցում, պաշտպանեցին Գերագույն խորհրդի բոլոր 14 անդամները: Գործի շրջանային դատարանում անժամկետ դատավոր նշանակվեց նաեւ Գիգի Ուզուլավալի եւ Վանո Մերաբիշվիլու դատավորության դատավոր Գերման Դադեշվելիանին:

Նշենք, որ անժամկետ դատավորներ նշանակված անձինք այդ պաշտոններում կաշխատեն մինչև կենսաթոշակային տարիքը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿՈՍՏԻՆԱԿԱՆ ՎԱՌԻՉԵՐՆԵՐԸ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԶԵՆ ՀԱՆԳԵՑՆԻ

Թբիլիսիի քաղաքապետարանի կողմից բնակչությանը կոմունալ վառելիքի համաձայնագրի կնքման և սպասարկման հարցերի լուծման հարցում կատարվող աշխատանքների մասին հարցազրույցի ժամկետը հիմնավորում:

Ինչպես հայտարարեց աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության կենսաթոշակների եւ սոցիալական օգնության վարչության պետ Թաթիա Գվարամիձեն, վերոնշյալ թեմա-

յով «Միասնական ազգային շարժման» անդամ Իրակլի Աբեսաձեի հայտարարությունը գուրկ է հիմնավորում:

Նրա խոսքով, պետական կամ տեղական մարմինների կողմից տրված վառելիքի գումարները ընտանիքներին ընձե-

ռում են սոցիալական լրացուցիչ օգնություն ստանալու հնարավորություն:

Քաղաքապետարանի կողմից տրվող վառելիքի չեմ կարող լինել սոցիալական օգնության դադարեցման հիմնավորում: Վառելիքի համաձայնագրի սոցիալական օգնության դադարեցման, այլեւ ընտանիքների սոցիալական վիճակի

լրացուցիչ ստուգման կամ այլ նման գործողությունների համար հիմնավորում չեն: Սոցիալական սպասարկման գործակալության սակագների միջեւ տարբերությունը փոխհատուցում է այն ընտանիքների համար, որոնց վարկանիշայինը կազմում է 70 000 միավորից քիչ,- հայտարարեց Թաթիա Գվարամաձեն:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

ԼԲՈՒՄ ԵՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԵՐԸ

Հոկտեմբերի 8-ի խորհրդարանական ընտրություններին 5 տոկոսի արգելագիծը չհատկապես «Հանրապետական» եւ «Ազատ ժողովրդավարներ» կուսակցությունների շարքերը նստրանում են:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ռուսուփաշվիլին հայտարարեց դեռ վերջերս կառավարող կոալիցիայի կազմում գտնվող «Հանրապետական» կուսակցությունը թողնելու իր մտադրության մասին: «Հաստատում են, որ ընդունել են մարդկայնորեն ցավազին, սակայն քաղաքականապես անհրաժեշտ որոշում «Հանրապետական» կուսակցությունից հեռանալու վերաբերյալ: Կուսակցության լիդերների ու նախագահի մոտ տակտիկական ու արժեքային այնպիսի հայացքներ էին, որոնք ինձ համար անընդունելի են, թեպետ ես

չեմ կարող հակադրվել կուսակցության որոշումներին,- հայտարարեց Դավիթ Ռուսուփաշվիլին:

Ավելացնենք, որ խորհրդարանական ընտրություններից հետո, երբ «Հանրապետական» կուսակցությունը չկարողացավ հաղթահարել 5 տոկոսի արգելագիծը եւ դուրս մնաց խորհրդարանից, կուսակցության շարքերը լքելու դիմումներ են ներկայացրել կուսակցության այնպիսի ճանաչված դեմքեր, ինչպիսիք էին՝ հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության նախկին պետնախարար Պա-

ատա Ջաբարիշվիլին, պաշտպանության նախկին նախարար Թինա Խիդաշելին, բնապահպանության եւ բնական ռեսուրսների պաշտպանության նախկին նախարար Գիգա Ազուլաշվիլին, ութերորդ գումարման խորհրդարանի պատգամավորներ Վախթանգ Խնալաձեն, Թենգիզ Շերգելաշվիլին եւ ուրիշներ:

«Ազատ ժողովրդավարներ» կուսակցությունից դուրս գալու մասին հայտարարեց նաեւ կուսակցության լիդեր Իրակլի Ալասանիան: Նա հրաժարվեց մասնակցել ընտրությունների երկրորդ փուլին: Կուսակցությունից հեռացավ նաեւ եվրոպական եւ եվրանտլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով նախկին պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԱՊԱՅՈՒՄԵՑ ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ուստիեւ, հոկտեմբերի 30-ին անցկացվեց ընտրությունների երկրորդ փուլը: 50 ընտրատարածքներից 45-ում «Վրացական երազանքի» թեկնածուներին հաղթելու էին «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչները, մեկական ընտրածքներում՝ «Ազատ ժողովրդավարների» թեկնածուները: «Արդյունաբերողների» ներկայացուցիչը, եւս երկուսում՝ անկախ թեկնածուները: Մթածմինդայի ընտրատարածքում երկրորդ փուլում մրցակցում էին անկախ թեկնածուն ու «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչը:

Հոկտեմբերի 30-ի ընտրությունների արդյունքներով, «Վրացական երազանքի» թեկնածուները առավելության հասան 48 ընտրատարածքներում, երկու ընտրատարածքներում հաջողության հասան անկախ թեկնածու Սալոմե Ջուրաբիշվիլին եւ «Արդյունաբերողների» ներկայացուցիչ Սիմոն Նոգաձեն:

Հոկտեմբերի 30-ի խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլին մասնակցել է երկրի ողջ մասշտաբով ընտրացուցակներում գրանցված ընտրողների 37,5 տոկոսը՝ 929 հազար մարդ:

ՊԱՎԻՐ ՏԻՃԻՆՉԵՆ ՆԱԿ ԻՍԱՆՅՈՒ ԶԱՅԵՐԻ ԱՍԿՅՈՒԹՅԱՄԲ ԶԱԳԹՅՈՒ ԳՐԵԹԵ ԵՆՍԿԻ ԳԵՐԱԶԱՆՅՈՒԹՅԱՄԲ



Ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիի Իսանիի թիվ 9 ընտրատարածքում անցկացված ընտրությունների երկրորդ փուլում, մինչյանց դիմակայեցին «Վրացական երազանքի» թեկնածու Դավիթ Գիճինաձեն եւ «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչ Բեսիկ Կվիցիանին:

Թբիլիսահայերի՝ եկեղեցու, թատրոնի, թերթի եւ մի քանի հայկական կազմակերպությունների կողմից աջակցության արժանացած Դավիթ Գիճինաձեն իր ակտիվում գրանցեց ընտրողների ձայների 74,61 տոկոսը՝ գրեթե երեք անգամ գերազանցելով իր «Ազգայնական» մրցակցին (25,39 տոկոս):

ԳԻՐԳԻ ԿՈՊՅԱՆԵՆ՝ ԱՄԱՆՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՄԻՅՈՒՆ ԸՆՏՐՎԱԾ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ



Խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլում անցկացվեց նաեւ Ախալցխի թիվ 44 ընտրատարածքում: Այստեղ եւս, մյուս ընտրատարածքների օրինակով, մինչյանց հակադրվեցին «Վրացական երազանք» եւ «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչները: Ընտրությունների արդյունքներով, իր ակ-

տիվում գրանցելով ընտրողների ձայների 69,83 տոկոսը, պատգամավորական մանդատին արժանացավ «Վրացական երազանքի» թեկնածու Գիորգի Կոպաձեն: «Ազգայինների» ներկայացուցիչ Վաժա Զիտաշվիլին կարողացավ հավելել ձայների 30,17 տոկոսը:

ԹՄԱՅԱ ՆԱԿԵՐԻՍԻՆ՝ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՆԱԳՄԱՎՈՐ ՄԱՆԵՆՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 36 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻՅ



Ինչպես արդեն գրել ենք, հոկտեմբերի 8-ի խորհրդարանական ընտրություններին գրանցված ամենաշահակալի խախտումները վավերացվել էին Մառնեուլիի թիվ 36 ընտրատարածքում: Արդյունքում, ընտրատարածքի երկու ընտրատեղամասերի արդյունքները ճանաչվեցին անվավեր, եւ հոկտեմբերի 22-ին անցկացվեցին կրկնական ընտրություններ, թեպետ դրանք էլ պարզություն չմտցրին: Ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով 50 տոկոսի արգելափոխումը ոչ մի թեկնածու չկարողացավ հաղթահարել: Հոկտեմբերի 30-ին անցկացվեց ընտրությունների երկրորդ փուլը, որտեղ նորից դիմակայեցին «Վրացական երազանքի» թեկնածու Թամազ Նավերիանին եւ «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչ Ամեդ Իմամկուլիելը: Թամազ Նավերիանին ձայների 72,15 տոկոսով առավելության հասավ Ամեդ Իմամկուլիելի (27,85 տոկոս) նկատմամբ:

2016-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՅՆԱԶԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ի տարբերություն նախորդ խորհրդարանական ընտրությունների, 2016 թվականի ընտրությունները աչքի ընկան մասնակից սուբյեկտների բազմաքանակությամբ: Համամասնական մանդատները վիճարկում էին շուրջ երեք տասնյակ քաղաքական կուսակցություն եւ ընտրադաշինք, թեւ հիմնական ընտրությունը կատարվեց երկու սուբյեկտի միջեւ: «Վրացական երազանքի» եւ «Ազգային շարժման» օգտին, ընդհանուր առմամբ, քվեարկեց ընտրությունների մասնակիցների ավելի քան 75 տոկոսը: Դա երեւի կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Նախ, ընտրություններին մասնակից սուբյեկտների մեծամասնությունը չկարողացավ ներկայացնել գործողությունների հստակ ծրագիր, շատ սուբյեկտներ իրենց քարոզարշավը կենտրոնացրել էին միայն սոցիալական առանձին հարցերի վրա, հաճախ ներկայացնում էին անիրականալի խոստումներ (սակագների նվազեցում, կենսաթոշակների կրկնապատկում եւ այլն): Ընդհանուր ֆոնից իր արմատականությամբ յուրովի առանձնանում էր Նինո Բուրջանաձեի «Ժողովրդավարական շարժումը»: Նրա ոչ բլոկային կարգավիճակի կարգախոսը որոշակիորեն զգուշացրեց ընտրողներին, որոնք էլ գերադասեցին խուսափել դրանից:

Ինչ վերաբերում է ընտրություններին մասնակից հիմնական կուսակցությունների՝ «Վրացական երազանքի» եւ «Ազգային շարժման» քարոզարշավին, ապա, եթե առաջինը ընդգծում էր անցած չորս տարիների ձեռքբերումներն ու ազատության մակարդակի բարձրացումը, երկրորդը հնարավորինս նվազեցնում էր ձեռքբերումների նշանակությունը՝ վստահեցնելով, որ իրենց իշխանության օրոք դրանք առավել նշանակալի էին:

Ավելացնենք նաեւ, որ «Ազգային շարժումը», այնուհանդերձ, նոր խորհրդարանում ստացավ 27 մանդատ, որքան էլ տարօրինակ հնչի, մեծ է կառավարող կուսակցության ծառայությունը, քանի որ վերջինիս քարոզարշավի հիմքում դրվել էր «Կա'ն մենք, կա'ն «Ազգայինները» սկզբունքը, ինչն էլ, վերջին հաշվով պայմանավորեց ընտրությունների արդյունքները:

ԶԱՅՏԵՆ Ե 9-ՐԿ ԳՈՒՄԱՐԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿԱԶՄԸ

Այսպիսով, խորհրդարանականի մանդատի արժանացել 150 պատգամավոր, որոնցից 77-ն ընտրվել է կուսակցական ցուցակներով, 73-ը՝ ըստ միամանդատ ընտրատարածքների: Կուսակցական ցուցակներով «Վրացական երազանքն» ստացել է 44 տեղ, «Միասնական ազգային շարժումը»՝ 27, «Վրաստանի հայրենասերների դաշինքը»՝ 6 տեղ, մեկ մեծամասնական տեղ զբաղեցրել է Թոփաձեի «Արդյունաբերողներ» կուսակցությունից Սիմոն Նոգաձեն եւ եւս մեկ մանդատ բաժին է ընկել Թբիլիսիի թիվ 1 ընտրատարածքից Վրաստանի ԱԳ նախկին նախարար Սալոմե Ջուրաբիշվիլին:



Այսպիսով, նորընտիր խորհրդարանում «Վրացական երազանքը», սահմանադրական մեծամասնության համար անհրաժեշտ 113 ձայնի փոխարեն, իր տրամադրության տակ կունենա 115 մանդատ: Ավելացնենք, որ, գործող օրենսդրության համաձայն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ընտրությունների երկրորդ փուլից առնվազն 19 օրվա ընթացքում, ամենաուշը մինչեւ նոյեմբերի 18-ը, պետք է հրապարակի 2016 թվականի խորհրդարանական ընտրությունների հանրագումարային արձանագրությունը:

Ինչ վերաբերում է նորընտիր խորհրդարանի անդրանիկ միստին, ապա, ըստ աշխատակարգի, այն պետք է անցկացվի մինչեւ նոյեմբերի 19-ը, այսինքն ընտրությունների երկրորդ փուլից հետո, 20 օրվա ընթացքում: Նորընտիր խորհրդարանի անդրանիկ միստի անցկացման ամսաթիվը նշանակում է Վրաստանի նախագահը: Նա էլ բացում է խորհրդարանի միստը:

Անդրանիկ միստում պատգամավորներն ընտրելու են խորհրդարանի նախագահ եւ փոխնախագահներ, ինչպես նաեւ խորհրդարանական կոմիտեների նախագահներ ու հաստատելու են կոմիտեների կազմը:

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԶԱՄԱՐ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՊԱՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍԿՅՈՒԹՅՈՒՆ ԵՆ


(Սկիզբը՝ 1-ին էջում)

կալություն այն մեծ վստահության համար, որը արտահայտել էք մեր քաղաքական թիմի նկատմամբ: Դա մեծ պատասխանատվություն է անձամբ ինձ, «Վրացական երազանքի», մեր թիմի յուրաքանչյուր անդամի համար: Հավատում եմ, որ մենք արժանապատվորեն կկատարենք մեր պարտականությունները եւ երկիրը կանցկացնենք զարգացման նոր փուլ»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Մեր ժողովրդի որոշմամբ, «Վրացական երազանքը» ստացավ սահմանադրական մեծամասնություն: Մենք այդ մանդատը կօգտագործենք նրա համար, որպեսզի ոչ մի քաղաքական ուժ չկարողանա իրեն հարմարեցնել երկրի սահմանադրությունը: Մենք մեծ եւ հավակնոտ ծրագրեր ունենք, որոնք կողմնորոշված են կրթական համակարգի էական բարելավմանը, երկրի տնտեսական եւ ենթակառուցային արագ զարգացմանը, յուրաքանչյուր քաղաքացու բարօրությանը: Այսօրվանից սկսվում

է Վրաստանի շինարարության նոր փուլը, եւ մենք պատրաստ ենք վճռական քայլ կատարել երկրի առաջընթացի համար»,- նշեց Գիորգի Կվիրիկաշվիլին: Նրա խոսքով, աջակցելով «Վրացական երազանքին», մարդիկ քվեարկեցին ազատության, երկրի կայուն, արագ զարգացման եւ եվրոպական ապագայի օգտին: «Ընտրությունների դրական արդյունքները կարտացոլվեն մեզանից յուրաքանչյուրի կյանքի բարելավման վրա»,- ընդգծեց երկրի վարչապետը:

ՎԼԱԴԻՄԻՐ ԶԵՂՈՒՆԻՉԵՆ՝ ԱՄԱՆՅՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԱՔԱՊԵՏ



Հոկտեմբերի 30-ին, խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլին զուգընթաց, Ախալցխի թիվ 44 ընտրատարածքում անցկացվեց նաեւ քաղաքապետի ընտրության երկրորդ փուլը, որտեղ մրցակցում էին «Վրացական երազանքի» թեկնածու

Վլադիմիր Զեղովնիձեն եւ «Ազգային շարժման» ներկայացուցիչ Իրակլի Երեկլիշվիլին: Ընտրությունների առաջին փուլում Երեկլիշվիլին արժանացավ ընտրողների 45,98 տոկոսի աջակցությանը, իսկ Զեղովնիձեն՝ 36,99 տոկոսի: Երկրորդ փուլի արդյունքներով, Վլադիմիր Զեղովնիձեն 63,22 տոկոսով հաղթեց «Ազգայնական» Իրակլի Երեկլիշվիլին (36,78):

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԶԱԳԹՅՈՒ ՆԱԿ ԱՍՏՐԻԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՈՒՄ

«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության ներկայացուցիչները խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլում հաղթանակ են տարել նաեւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի բոլոր վեց միամանդատ ընտրատարածքներում:



Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 8-ին, Վրաստանի խորհրդարանական ընտրությունների հետ միասին, անցկացվեցին նաեւ Աջարիայի Գերագույն խորհրդի ընտրությունները: Ընտրությունների առաջին փուլի արդյունքներով, համամասնական ընտրակարգով, Գերագույն խորհրդի ընդհանուր 21 մանդատներից ութը բաժին ընկավ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստանին», հինգը՝ «Միասնական ազգային շարժմանը» եւ մեկական մանդատ՝ հինգ տոկոսանոց արգելափոխող հաղթահարած «Նինո Բուրջանաձե-ժողովրդավարական շարժում» եւ «Դավիթ Թարխան-Մուրավի, Իրմա Ինաշվիլի-Վրաստանի հայրենասերների ալյանս» ընտրադաշինքներին:

Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրակարգով ընտրությանը, ապա Աջարիայի բոլոր վեց ընտրատարածքներում առաջադրված թեկնածուներից ոչ մեկին չէր հաջողվել առաջին փուլում հաղթահարել 50 տոկոսի արգելափոխումը, եւ այդ պատճառով պահանջվեց երկրորդ փուլի անցկացում:

Հոկտեմբերի 30-ին անցկացված ընտրությունների երկրորդ փուլին, Աջարիայի բոլոր վեց ընտրատարածքներում, հաղթեցին «Վրացական երազանքի» ներկայացուցիչները:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ